




ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ  
ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ**



ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք



- ✓ ՄԹՆՈՂՈՐՏԱՅԻՆ ՕԴ
- ✓ ՄԹՆՈՂՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ
- ✓ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐ
- ✓ ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ
- ✓ ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ

## Բովանդակություն

ՄԹՆՈԼՈՐՏՍԱՅԻՆ ՕԴ .....	4
Երևան .....	4
Գյումրի .....	12
Վանաձոր .....	14
Ալավերդի .....	15
Հրազդան .....	18
Արարատ .....	21
Հանրապետության տարբեր բնակավայրեր .....	23
ՄՍԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ .....	24
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք .....	24
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք .....	28
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք .....	33
Սևանի ջրավազանային կառավարման տարածք .....	38
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք .....	41
Հարավային ջրավազանային կառավարման տարածք .....	46
Արաքս գետ .....	51
Ծաղկաձորում շրջակա միջավայրի մոնիթորինգ .....	53
«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր (EMEP)» .....	60
Հավելված 1. ՀՀ գետերի ջրի որակը 2017թ. 4-րդ եռամսյակում .....	62
Հավելված 2. ՀՀ ջրամբարների ջրերի որակը 2017թ. 4-րդ եռամսյակում .....	78
Հավելված 3. Արաքս գետի ջրի մոնիթորինգի արդյունքները 2017թ. 4-րդ եռամսյակում .....	79
Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետերը .....	82
Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ .....	87
Ստորերկրյա ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ .....	88
Տեղումներում որոշվող ցուցանիշների ցանկ .....	88
Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները .....	89
Հողում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները .....	89
Մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը .....	90
Մակերևութային ջրերի ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ .....	91
«Արտակարգ բարձր աղտոտվածություն» և «բարձր աղտոտվածություն» արտահայտությունների սահմանումը .....	92

**ՀՀ մթնոլորտային օդի, մակերևութային ջրերի, ստորերկրյա քաղցրահամ ջրերի մոնիթորինգի դիտացանց**



## ՄԹՆՈՂՈՐՏԱՅԻՆ ՕՂ

2017թ. 4-րդ եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան, Քաջարան, Մարտունի քաղաքներում և Սյունիք գյուղական համայնքում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 16 ստացիոնար դիտակայան, որոնցից 6 ստացիոնար դիտակայանում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվում են շուրջօրյա ավտոմատ դիտարկումներ և շարժական (պասիվ) նմուշառման 214 դիտակետ: Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին շուրջօրյա ակտիվ նմուշառմամբ վերցվել է օդի 3970 փորձանմուշ: Հանրապետության 11 բնակավայրի պասիվ նմուշառման դիտակետերից վերցվել է օդի 4945 փորձանմուշ: Երևան և Ալավերդի քաղաքների ստացիոնար կայաններում կատարվել է օդի՝ համապատասխանաբար 98160 և 27556 ավտոմատ դիտարկում:

Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան, Քաջարան, Մարտունի, Ծաղկաձոր քաղաքների և Սյունիք գյուղական համայնքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական և միջին շաբաթական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են [www.armmonitoring.am](http://www.armmonitoring.am) ինտերնետային կայքում:

### Երևան

Երևան քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու՝ ծծմբի երկօքսիդի՝, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է շարժական (պասիվ նմուշառման) 42 դիտակետ և յոթ ստացիոնար դիտակայան (№1, №2, №7, №8, №16-1 №18 և №19), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ (24-ժամյա), իսկ մնացած հինգ դիտակայանում (№1, №7, №8, №16-1 և №19)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

2017թ. 4-րդ եռամսյակում ստացիոնար դիտակայաններից ակտիվ նմուշառմամբ վերցվել է օդի 2205, շարժական դիտակետերից պասիվ նմուշառմամբ՝ 1012 փորձանմուշ: Ավտոմատ եղանակով ստացիոնար դիտակայաններում կատարվել է ածխածնի մոնօքսիդի՝ 38227, ծծմբի երկօքսիդի՝ 52415, ազոտի օքսիդների՝ 7518 դիտարկում:

Որոշված միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները (ՄԹԿ):

---

\* կախված մասնիկներ  
\*\* անհիդրիդ ծծմբային

Երևան քաղաքի մթնոլորտային օդի 2017թ. 4-րդ եռամսյակում կատարված  
դիտարկումների արդյունքները (ակտիվ նմուշառում)

**Հոկտեմբեր**

Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ <sup>3</sup>	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup> (դիտակայանի համար)	Դիտար- կումների քանակ	ՍԹԿ-ից գերազան- ցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.027	0.068 (դիտ. № 7)	211	9
Ազոտի երկօքսիդ	0.04	0.014	0.037 (դիտ. № 19)	210	-
Ընդհանուր փոշի	0.15	0.097	0.417 (դիտ. № 2)	211	26
Գետնամերձ օզոն	0.03	0.007	0.019 (դիտ. № 16-1)	210	-




**Նոյեմբեր**

Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ <sup>3</sup>	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup> (դիտակայանի համար)	Դիտար- կումների քանակ	ՍԹԿ-ից գերազան- ցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.031	0.070 (դիտ. № 1)	180	10
Ազոտի երկօքսիդ	0.04	0.013	0.183 (դիտ. № 19)	180	9
Ընդհանուր փոշի	0.15	0.134	0.960 (դիտ. № 18)	180	53
Գետնամերձ օզոն	0.03	0.005	0.024 (դիտ. № 19)	180	-




**Դեկտեմբեր**

Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ <sup>3</sup>	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup> (դիտակայանի համար)	Դիտար- կումների քանակ	ՍԹԿ-ից գերազան- ցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.032	0.077 (դիտ. № 8)	162	17
Ազոտի երկօքսիդ	0.04	0.013	0.084 (դիտ. № 19)	162	3
Ընդհանուր փոշի	0.15	0.129	0.726 (դիտ. № 18)	159	45
Գետնամերձ օզոն	0.03	0.006	0.023 (դիտ. № 19)	160	-




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում)։






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում)։








Երևանի Կենտրոն համայնքի մթնոլորտային օդում ածխածնի մոնոքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները (ավտոմատ դիտարկում)։




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի ( $SO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը






Պայմանանշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակետեր
-  Արդյունաբերական կետեր
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Երկաթգծեր
-  Գետային ցանց
-  Երևանի սահմանագիծ


Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ( $\mu\text{գ}/\text{մ}^3$ )



**Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի ( $NO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



- Պայմանանշաններ**
- Պասիվ նմուշառման դիտակետեր
  - Ակտիվ նմուշառման դիտակետեր
  - Արդյունաբերական կետեր
  - Ճանապարհներ և փողոցներ
  - Երկաթգծեր
  - Գետային ցանց
  - Երևանի սահմանագիծ




## Գյումրի

Գյումրի քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ ստացիոնար դիտակայան և 24 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:

Ստացիոնար դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 91, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման եղանակով՝ 670 փորձանմուշ:

Որոշված միացություններից ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան հոկտեմբերին գերազանցել է ՍԹԿ-ն 1.3 անգամ, նոյեմբերին՝ 2.2, դեկտեմբերին՝ 2.0 անգամ: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները համապատասխան ՍԹԿ-ները չեն գերազանցել:



Գյումրի քաղաքի մթնոլորտային օդի 2017թ. 4-րդ եռամսյակում կատարված դիտարկումների արդյունքները

**Հոկտեմբեր**

Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ <sup>3</sup>	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.023	0.050
Ազոտի երկօքսիդ	0.04	0.013	0.025
Ընդհանուր փոշի	0.15	0.189	0.567

**Նոյեմբեր**

Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ <sup>3</sup>	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.025	0.063
Ազոտի երկօքսիդ	0.04	0.011	0.018
Ընդհանուր փոշի	0.15	0.328	1.040

**Դեկտեմբեր**


Աղտոտող նյութ	ՍԹԿ (միջին օրական), մգ/մ <sup>3</sup>	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.029	0.071
Ազոտի երկօքսիդ	0.04	0.015	0.034
Ընդհանուր փոշի	0.15	0.298	0.874

## Վանաձոր

Վանաձոր քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք ստացիոնար դիտակայան և 24 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:

Ստացիոնար դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 786, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման եղանակով՝ 623 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գերազանցել է ՍԹԿ-ն 1.7 անգամ, դեկտեմբերին՝ 1.6 անգամ: Ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին գերազանցել է ՍԹԿ-ն 1.3 անգամ, դեկտեմբերին՝ 1.2 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան երեք ամիսների ընթացքում չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:






## Ալավերդի

Ալավերդի քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և ածխածնի մոնօքսիդի դիտարկումներ: Քաղաքում և հարակից համայնքներում գործում են երեք ստացիոնար դիտակայան և 42 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:

Ստացիոնար դիտակայաններից ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 529, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 1051 փորձանմուշ: Ստացիոնար դիտակայանում կատարվել է ածխածնի մոնօքսիդի 14116, ծծմբի երկօքսիդի՝ 11061, ազոտի օքսիդների՝ 2379 ավտոմատ դիտարկում:


Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան հոկտեմբերին գերազանցել է ՍԹԿ-ն 1.7 անգամ, նոյեմբերին՝ 2.1, դեկտեմբերին՝ 2.2 անգամ: Ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան հոկտեմբերին գերազանցել է ՍԹԿ-ն 2.7 անգամ, նոյեմբերին՝ 1.3 անգամ, դեկտեմբերին՝ 1.5 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան երեք ամիսների ընթացքում չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:

**Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդի ծծմբի երկօքսիդի ( $SO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**




- ◆ Պայմանանշաններ
- ◆ Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Գետային ցանց
- Ծանապարհներ և փողոցներ
- Միջպետական ճանապարհ
- Երկաթգծեր
- Բնակավայրերի սահման

Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ( $մգ/մ^3$ )






**Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդի ազոտի երկօքսիդի ( $NO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



- Պայմանանշաններ**
- ◆ Պասիվ նմուշառման դիտակետեր
  - Ակտիվ նմուշառման դիտակետեր
  - Գետային ցանց
  - Ճանապարհներ և փողոցներ
  - Միջպետական ճանապարհ
  - Երկաթգծեր
  - Բնակավայրերի սահման





## Հրազդան

Հրազդան քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ ստացիոնար դիտակայան և 17 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:



Ստացիոնար դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 273, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 439 փորձանմուշ:

Ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան հոկտեմբերին գերազանցել է ՍԹԿ-ն 2.8 անգամ, նոյեմբերին՝ 2.5, դեկտեմբերին՝ 1.2 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում).




**Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի ( $SO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**




**Պայմանանշաններ**



-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակետեր
-  Արդյունաբերական կետեր
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Գետային ցանց
-  Բնակավայրերի սահման
-  Աղբյուրակ ջրամբար







Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ( $\mu\text{g}/\text{m}^3$ )




**Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի ( $NO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**




**Պայմանանշաններ**

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակետեր
-  Արդյունաբերական կետեր
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Գետային ցանց
-  Բնակավայրերի սահման
-  Աղբյուրակ ջրամբար



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ( $\mu g/m^3$ )




## Արարատ

Արարատ քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ ստացիոնար դիտակայան և 12 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:



Ստացիոնար դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 86, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման եղանակով՝ 310 փորձանմուշ:

Ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան դեկտեմբերին գերազանցել է ՍԹԿ-ն 1.9 անգամ:

Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների փոփոխությունները (պասսիվ նմուշառում)։





## Հանրապետության տարբեր բնակավայրեր

2017թ. 4-րդ եռամսյակում շարժական դիտակետերում պասիվ նմուշառիչներով օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Կապան, Քաջարան, Չարենցավան, Մարտունի քաղաքներում և Սյունիք գյուղական համայնքում:

Երեք ամիսների ընթացքում Կապան քաղաքի 11 շարժական դիտակետից պասիվ նմուշառմամբ վերցվել է օդի 128 փորձանմուշ, Քաջարան քաղաքի 15 դիտակետից՝ 175 փորձանմուշ, Չարենցավան քաղաքի 10 դիտակետից՝ 237 փորձանմուշ, Մարտունի քաղաքի 8 դիտակետից՝ 192 փորձանմուշ, Սյունիք գյուղական համայնքի 9 դիտակետից՝ 108 փորձանմուշ:

Նշված բնակավայրերի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների գրաֆիկական պատկերները



## ՄԱԿԵՐՆԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ

2017թ. 4-րդ եռամսյակում կատարվել են մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի դիտարկումներ:

Մակերևութային ջրերի դիտարկումներ իրականացվել են հանրապետության 42 գետի, Երևանյան լճի, Ապարանի, Ախուրյանի, Արփի լճի, Ագատի, Կեչուտի ջրամբարների դիտակետերից, որտեղից վերցվել է 134 փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել է միջինը 45 ֆիզիկաքիմիական ցուցանիշ: Իրականացված դիտարկումների արդյունքները բերված են հավելվածներում աղյուսակների տեսքով:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներ իրականացվել են հանրապետության ազգային կամ հենակետային ցանցում ընդգրկված 128 ստորերկրյա ջրաղբյուրներում՝ որոնք ներառում են 27 շատրվանոց հորատանցք, 37 չշատրվանոց հորատանցք և 64 բնաղբյուր: Ջրաղբյուրներում ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումները կատարվում են ամսական 6 անգամ հաճախականությամբ: Նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակական դիտարկումներ իրականացվել են ազգային ցանցում ընդգրկված 50 ստորերկրյա ջրաղբյուրներում: Իրականացված դիտարկումների արդյունքները տրված են գրաֆիկների տեսքով:

## Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

### Մակերևութային ջրեր

Փամբակ գետի՝ Հարթագյուղից վերև հատվածում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Սպիտակից ներքև հատվածում հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Երեք ամիսների ընթացքում Վանաձորից վերև հատվածում գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վանաձորից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում՝ «վատ» (5-րդ դաս):

Դեբեդ գետի՝ Մարցիգետի թափման կետից ներքև ընկած հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), դեկտեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Այրումից վերև և սահմանի մոտ հատվածներում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Չորագետի՝ Ստեփանավանից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» է (3-րդ դաս): Հոկտեմբերին Տաշիր գետի Միխայելովկայից վերև ընկած հատվածում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Սարատովկայից ներքև հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս):

Մարցիգետի գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Ախթալա գետի գետաբերանում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

---

\* Ստորերկրյա ջրերի դիտակետերի տեսակը, համարները, տեղադիրքը տրված է տեղեկանքի 82-րդ էջում աղյուսակի տեսքով



Գառգառ գետի ակունքում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):


Շնող գետի գետաբերանում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աղստև գետի՝ Դիլիջանից վերև և Դիլիջանից ներքև ընկած հատվածներում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել «միջակ» (3-րդ դաս), նոյեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Իջևանից վերև հատվածում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «լավ» (2-րդ դաս): Սահմանի մոտ հատվածում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):



Գետիկ գետի՝ Ճամբարակից վերև հատվածում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Գետաբերանի հատվածում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), նոյեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

### **Ստորերկրյա ջրեր**


Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 5 բնադրյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ջրի ծախսի միջին ամսական արժեքները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկի տեսքով:






**ԴԵԲԵՂ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ  
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ  
ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
  - Քաղաքներ
  - Գյուղեր
  - ▲ Ջրի նմուշառման դիտակետեր
  - ▲ Ստորերկրյա ջրերի դիտակետեր
  - Գետային ցանց
  - ՀՀ պետական սահման
  - Լճեր և ջրամբարներ
  - Դերեղ գետի ավազան
- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
  - 3-րդ դաս
  - 4-րդ դաս
  - 5-րդ դաս



**ԱՂԱՏԵՎ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ  
ՋՐԵՐԻ ՔԻՄԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ  
ՍՏՈՐԵՐԿՐԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



- ՊԱՅՄԱՆԱՇԱՆՆԵՐ**
- |  |  |  |                                 |
|--|--|--|---------------------------------|
|  | Մարզկենտրոն                              |  | Մակերևութային ջրերի որակի դասեր |
|  | Քաղաքներ                                 |  | 2-րդ դաս                        |
|  | Գյուղեր                                  |  | 3-րդ դաս                        |
|  | Ստորերկրյա ջրերի դիտակետեր               |  | 4-րդ դաս                        |
|  | Մակերևութային ջրերի նմուշառման դիտակետեր |  | 4-րդ դաս                        |
|  | Գետային ցանց                             |  |                                 |
|  | ՀՀ պետական սահման                        |  |                                 |
|  | Աղստև գետի ավազան                        |  |                                 |

## Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

### Մակերևութային ջրեր

Ախուրյան գետի՝ Ամասիայից ներքև հատվածում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Գյումրիից վերև և Երվանդաշատից ներքև հատվածներում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), նոյեմբեր ամսին՝ «անբավարար» (4-րդ դաս): Գյումրիից ներքև հատվածում հոկտեմբերին ամսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս):


Աշոցք գետի Արտաշենից վերև հատվածում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս):




Կարկաչուն գետի գետաբերանում հոկտեմբեր և նոյեմբեր ամսինների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Մեծամոր գետի Վաղարշապատից հարավ և հարավ-արևելք հատվածներում հոկտեմբեր, նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), դեկտեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս): Ռանչպարից ներքև ընկած հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

### Ստորերկրյա ջրեր


Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 14 բնադրյուրում, 7 շատրվանող և 15 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:









Ախուրյանի ՋԿՏ-ի դիտակետերում որակական դիտարկումներ կատարվել են 6 բնադրյուրում, 4 շատրվանող և 7 չշատրվանող հորատանցքերում: Որոշված ցուցանիշներից ընդհանուր լուծված աղերի գրաֆիկական պատկերը ներկայացվում է ստորև.





**ԱԽՈՒՐՅԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ  
ԶՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ  
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ԶՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**




- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
  - Քաղաքներ
  - Գյուղեր
  - Ջրմբ. ենուշտան հիտակետեր
  - ▲ Մակերևութային ջրերի ենուշտան հիտակետեր
  - ▲ Ստորերկրյա ջրերի հիտակետեր
  - Գետային ցանց
  - 22 պետական սահման
  - Լճեր և ջրամբարներ
  - Ախուրյան գետի ափագան
- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
  - 3-րդ դաս
  - 4-րդ դաս
  - 5-րդ դաս

**ՄԵԾԱՄՈՐ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ  
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ  
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
  - Քաղաքներ
  - Գյուղեր
  - ◆ Ստորերկրյա ջրերի դիտակետեր
  - Գետային ցանց
  - ՀՀ պետական սահման
  - Լճեր և ջրամբարներ
  - Մեծամոր գետի ավազան



- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 4-րդ դաս
  - 5-րդ դաս



## Հրագրանի ջրավազանային կառավարման տարածք

### Մակերևութային ջրեր

Քասախ գետի Ապարանից վերև հատվածում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Ապարանից ներքև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Աշտարակից վերև և ներքև հատվածներում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբերին՝ «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբերին՝ «միջակ» (3-րդ դաս):

Գեղարոտ գետի՝ Արագածից վերև հատվածում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Շաղվարդ գետի Փարպիից ներքև հատվածում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):




Հրագրան գետի Քաղսիից ներքև ընկած հատվածում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), դեկտեմբեր ամսին՝ «վատ» (5-րդ դաս): Արգելից ներքև, Արգնի ՀԷԿ-ից ներքև, Դարբնիկի մոտ, Գեղանիստի մոտ և Հրագրան գետի գետաբերանի հատվածներում, ինչպես նաև Գետառ գետի գետաբերանի հատվածում երեք ամսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):



Մարմարիկ գետի Հանքավանից վերև ընկած հատվածում հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

### Ստորերկրյա ջրեր


Հրագրանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 15 բնադրյուրում, 9 շատրվանող և 8 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի ծախսի և մակարդակի միջին ամսական արժեքները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:










Հրազդանի ՋԿՏ-ի 6 ջրաղբյուրների դիտակետերում կատարվել են ջրի որակի դիտարկումներ, որոշված ցուցանիշներից ընդհանուր լուծված աղերի գրաֆիկական պատկերը ներկայացվում է ստորև.





**ՔԱՍԱԽ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ  
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ  
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**




- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
  - Քաղաքներ
  - Գյուղեր
  - Ջրաբ. նմուշառման դիտակետեր
  - ▲ Մակերևութային ջրերի նմուշառման դիտակետեր
  - ▲ Ստորերկրյա ջրերի դիտակետեր
  - Գետային ցանց
  - Լճեր և ջրամբարներ
  - Քասախ գետի ավազան
- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 2-րդ դաս
  - 3-րդ դաս
  - 4-րդ դաս
  - 5-րդ դաս



**ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ  
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ  
ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
  - Քաղաքներ
  - Գյուղեր
  - Ջրմբ. նմուշառման դիտակետեր
  - Ստորերկրյա ջրերի դիտակետեր
  - Մակերևութային ջրերի նմուշառման դիտակետեր
  - Գետային ցանց
  - ՀՀ պետական սահման
  - Լճեր և ջրամբարներ
  - ԵՐԵՎԱՆ
  - Հրազդան գետի ավազան



- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 3-րդ դաս
  - 4-րդ դաս
  - 5-րդ դաս

## Սևանի ջրավազանային կառավարման տարածք

### Մակերևութային ջրեր

Չկնազետ գետի Սեմյոնովկայից վերև և գետաբերանի հատվածներում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Մասրիկ գետի Վերին Շորժայից վերև հատվածում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «վատ» (5-րդ դաս):

Սոթք գետի հանքավայրից վերև հատվածում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս):

Կարճաղբյուր գետի Աղբյուրաձորից վերև ընկած հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս):

Վարդենիս գետի Վարդենիկից վերև հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), գետաբերանի հատվածում՝ «միջակ» (3-րդ դաս):

Մարտունի գետի Գեղահովիտից վերև և գետաբերանի հատվածներում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Արգիճի գետի Լեռնակերտից վերև և գետաբերանի հատվածներում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):



Ծակքար և Շողվազ գետերի գետաբերանի հատվածներում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Գավառագետ գետի գետաբերանի հատվածում հոկտեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


### Ստորերկրյա ջրեր

Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 10 բնաղբյուրում, 6 շատրվանող և 1 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:





**ՍԵՎԱՆԻ ՋՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ  
ԳԵՏԵՐԻ ՋՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ  
ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ (ՀՈԿՏԵՄԲԵՐ 2017)**





## Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

### Մակերևութային ջրեր



Արփա գետի՝ Վայքից վերև հատվածում նոյեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Վայքից ներքև հատվածում նոյեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Եղեգնաձորից վերև և Արենիից ներքև հատվածներում նոյեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):



Եղեգիս գետի Շատին գյուղից ներքև ընկած հատվածում նոյեմբերին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Արփա-Սևան թունելի՝ Ծովինարից վերև հատվածում ջրի որակը հոկտեմբերին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


### Ստորերկրյա ջրեր

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 12 բնադբյուրում, 5 շատրվանող և 13 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի ծախսի և մակարդակի միջին ամսական արժեքներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:






Արարատյան ՋԿՏ-ի 9 ջրաղբյուրների դիտակետերում կատարվել են ջրի որակի դիտարկումներ, որոշված ցուցանիշներից ընդհանուր լուծված աղերի գրաֆիկական պատկերը ներկայացվում է ստորև.





**ԱԶԱՏ ԵՎ ՎԵՂԻ ԳԵՏԵՐԻ ԱՎԱԶԱՆՆԵՐԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ  
ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵԿՐՅԱ  
ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ (ՀՈԿՏԵՄԲԵՐ 2017)**



**ՊԱՅՄԱՆԱՇԱՆՆԵՐ**

	Մարդկետրոն		Գետային ցանց
	Քարանձակ		22 պետական սահման
	Գյուղեր		ԼՃեր և ջրամբարներ
	Ջրի և մուշտանի օբյեկտներ		Վեղի գետի ավազան
	Մակերևութային ջրերի և մուշտանի օբյեկտներ		Ազատ գետի ավազան
	Ստորերկրյա թաղանթի ջրերի օբյեկտներ		Մակերևութային ջրերի որակի դաս
			4-րդ դաս

**ԱՐՓԱ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ (ՆՈՅՏԵՄԲԵՐ 2017)**



## Հարավային ջրավազանային կառավարման տարածք

### Մակերևութային ջրեր

Մեղրի գետի՝ Մեղրիից վերև և գետաբերանի հատվածներում նոյեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Կարճևան գետի գետաբերանում նոյեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Ողջի գետի Քաջարանից վերև և Կապանից վերև հատվածներում նոյեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Քաջարանից ներքև հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս), Կապանից ներքև հատվածում՝ «վատ» (5-րդ դաս):

Արծվանիկ գետի գետաբերանի հատվածում նոյեմբերին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գեղի գետի գետաբերանի հատվածում նոյեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Որոտան գետի՝ Գորհայքից վերև հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս): Միսիանից վերև և ներքև, ինչպես նաև Տաթև ՀԷԿ-ից ներքև հատվածում նոյեմբերին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Միսիան գետի գետաբերանի հատվածում նոյեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):


Գորիս գետի Գորիսից վերև հատվածում նոյեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս), Գորիսից ներքև հատվածում՝ «վատ» (5-րդ դաս):

### Ստորերկրյա ջրեր


Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 9 բնադրյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ջրի ծախսի և մակարդակի միջին ամսական արժեքներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:



Հարավային ՋԿՏ-ի 4 ջրաղբյուրի դիտակետերում կատարվել են ջրի որակի դիտարկումներ, որոշված ցուցանիշներից ընդհանուր լուծված աղերի գրաֆիկական պատկերը ներկայացվում է ստորև



**ՄԵՂՐԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ (ՆՈՅԵՄԲԵՐ 2017)**




**ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**


	Քաղաքներ		Մակերևութային ջրերի որակի դասեր
	Գյուղեր		2-րդ դաս
	Գետային ցանց		5-րդ դաս
	ՀՀ պետական սահման		
	Մեղրի գետի ավազան		



**ՈՂՋԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ (ՆՈՅԵՄԲԵՐ 2017)**



**ՈՐՈՏԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ  
ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ (ՆՈՅԵՄԲԵՐ 2017)**




- ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**
- Քաղաքներ
  - Գյուղեր
  - ◆ Ստորերկրյա ջրերի դիտակետեր
  - Գետային ցանց
  - ՀՀ պետական սահման
  - Լճեր և ջրամբարներ
  - Որոտան գետի ավազան
- |                                       |                                 |
|---------------------------------------|---------------------------------|
| <span style="color: green;">●</span>  | Մակերևութային ջրերի որակի դասեր |
| <span style="color: green;">●</span>  | 2-րդ դաս                        |
| <span style="color: yellow;">●</span> | 3-րդ դաս                        |
| <span style="color: red;">●</span>    | 5-րդ դաս                        |



## Արաքս գետ

2017թ. 4-րդ եռամսյակում վերցվել են փորձանմուշներ Արաքս գետի ջրի 16 և հատակային նստվածքի 6 դիտակետից: Վերցված ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնատնտեսական ՄԹԿ-ով գնահատման, դիտվում է վանադիումով, որոշ փորձանմուշներում նիտրիտով, քրոմով, պղնձով, մանգանով և ալյումինով բարձր աղտոտվածություն: Որոշված մյուս ցուցանիշներից գերազանցվել են ԹՔՊ-ի, ԹԿՊ<sub>5</sub>-ի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, մագնեզիումի, ցինկի, երկաթի և սելենի ՄԹԿ-ները: Արաքս գետի աղտոտվածության գերազանցումների վերաբերյալ մանրամասն տեղեկություն ըստ առանձին ամիսների տրվում է հավելված 3-ում: Հատակային նստվածքներում որոշված որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են ստորև.

«ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՀԱՅ-ԻՐԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՂ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ»  
 ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԳԵՏԻ ՋՐԻ  
 ՈՐԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ



- ՊԱՅԱՄԱՆԱՇԱՆՆԵՐ  
 Մակերևութային ջրերի  
 նմուշառման դիտակետեր
- ▲ ՀՀ տարածքից
  - ▲ ԻՐՀ տարածքից
  - Քաղաքներ
  - Գյուղեր
  - Գետային ցանց
  - ՀՀ պետական սահման
  - Լճեր և ջրամբարներ

Արարս գետի հատակային նստվածքի մոնիթորինգի արդյունքները.

Կոնցենտրացիա, գ/կգ	Դիտակետ					
	AMS_1	AMS_2	AMS_3	IMS_1	IMS_3	IMS_5
Ալյումին	23.4	51.1	48.2	38.5	22.6	74.3
Երկաթ	36.7	20.4	93.8	52.9	31.7	41.5
Մանգան	0.570	0.464	0.562	0.699	0.497	0.768
Նիկել	0.146	0.008	0.027	0.133	0.130	0.017
Պղինձ	0.041	0.449	1.558	0.040	0.036	0.604
Արսեն	0.0101	0.0043	0.0162	0.0119	0.0090	0.0067
Մոլիբդեն	0.0006	0.0453	0.0991	0.0006	0.0004	0.0419

## Ծաղկածորում շրջակա միջավայրի մոնիթորինգ



### Օդային ավազան

Ծաղկածոր քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ ստացիոնար դիտակայան և 14 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:

Ստացիոնար դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 267, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 364 փորձանմուշ:


Մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ծաղկածոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում).





**Ծաղկաձոր քաղաքի հողային ծածկույթի մոնիթորինգի արդյունքները.**



2017թ. 4-րդ եռամսյակում վերցվել է հողային ծածկույթի 8 փորձանմուշ՝ հողում մետաղների պարունակության գնահատման նպատակով:





Կոնցենտրացիա, գ/կգ	ՄԹԿ, գ/կգ	Դիտակետ							
		1	2	3	4	5	6	7	8
Լիթիում	0.032	0.022	0.014	0.021	0.021	0.020	0.012	0.012	0.013
Նատրիում	—	10.80	7.92	21.01	10.99	14.25	7.22	4.37	3.98
Մագնեզիում	—	5.96	6.40	5.76	6.00	6.81	3.89	1.72	4.93
Կալիում	—	10.53	10.68	18.52	12.73	14.21	7.84	4.11	10.23
Կալցիում	—	17.67	16.23	21.30	14.45	22.17	15.09	3.27	19.05
Վանադիում	0.15	0.088	0.094	0.047	0.080	0.072	0.088	0.109	0.080
Քրոմ	0.006	0.077	0.060	0.040	0.073	0.074	0.065	0.078	0.087
Երկաթ	—	31.92	27.30	26.59	28.73	36.81	22.83	19.92	27.11
Մանգան	—	0.788	0.682	0.797	0.818	1.119	0.634	0.335	0.604
Կոբալտ	0.005	0.020	0.018	0.012	0.016	0.018	0.018	0.017	0.017
Նիկել	0.004	0.055	0.049	0.025	0.050	0.045	0.046	0.070	0.061
Պղինձ	0.003	0.042	0.042	0.030	0.035	0.040	0.041	0.039	0.055
Ցինկ	0.023	0.082	0.083	0.071	0.087	0.099	0.082	0.057	0.180
Արսեն	0.002	0.0086	0.0095	0.0048	0.0075	0.0070	0.0077	0.0081	0.0092
Ստրոնցիում	—	0.261	0.266	0.647	0.301	0.488	0.145	0.048	0.180
Մոլիբդեն	—	0.0014	0.0014	0.0022	0.0015	0.0014	0.0014	0.0010	0.0013
Կադմիում	—	0.0003	0.0003	0.0002	0.0003	0.0004	0.0003	0.0003	0.0006
Ծարիր	0.0045	0.0007	0.00065	0.00041	0.00063	0.00055	0.00094	0.00088	0.0019
Բարիում	—	0.441	0.388	0.980	0.587	0.697	0.223	0.086	0.332
Կապար	0.32	0.031	0.027	0.043	0.032	0.033	0.033	0.025	0.079



**Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի ( $SO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**









- Պայմանանշաններ**
-  Պասիվ նմուշառման դիտակետեր
  -  Ակտիվ նմուշառման դիտակետեր
  -  Գետային ցանց
  -  Ճանապարհներ և փողոցներ
  -  Բնակավայրերի սահման




**Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի ( $NO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



- Պայմանանշաններ**
-  Պասիվ նմուշառման դիտակետեր
  -  Ակտիվ նմուշառման դիտակետեր
  -  Գետային ցանց
  -  Ճանապարհներ և փողոցներ
  -  Բնակավայրերի սահման



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ( $մգ/մ^3$ )





**Տանձադրյուր գետի ջրի որակը 2017թ. 4-րդ եռամսյակում**

Տանձադրյուր գետի վերին հոսանքում հոկտեմբեր ամսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին՝ «միջակ» (4-րդ դաս): Ծաղկաձոր քաղաքից ներքև հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

**Հոկտեմբեր**

ՉԿՏ	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Տանձադրյուր	Ծաղկաձոր քաղաքից վերև (311)	Վանադիում, կոբալտ, բարիում, բերիլիում	4-րդ	5-րդ
			Մանգան, ԿՆ	5-րդ	
		Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, կոբալտ, երկաթ, ալյումին, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
			Նիտրիտ իոն, մանգան, ԿՆ	4-րդ	
			Վանադիում	5-րդ	

**Նոյեմբեր**

ՉԿՏ	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Տանձադրյուր	Ծաղկաձոր քաղաքից վերև (311)	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, վանադիում, ալյումին	3-րդ	3-րդ
			Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	ԹՔՊ, նիտրատ իոն, ՇԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ
		Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան		4-րդ	
		Վանադիում		5-րդ	

**Դեկտեմբեր**



ՉԿՏ	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Տանձաղբյուր	Ծաղկաձոր քաղաքից վերև (311)	ԹՔՊ, վանադիում	3-րդ	3-րդ
		Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	Ամոնիում իոն, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
			Ֆոսֆատ իոն, վանադիում	4-րդ	
			Մանգան	5-րդ	

**Մթնոլորտային տեղումներ**

2017թ. 4-րդ եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում վերցվել է 5 անձրևի և 8 ձյան փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել են 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները ստորև բերվում են աղյուսակի տեսքով.

Ամսաթիվ	Ցուցանիշներ						
	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն (մկՍմ/սմ)	Մուլֆատ իոն (մգ/լ)	Քլորիդ իոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ֆտորիդ իոն (մգ/լ)	Ամոնիում իոն (մգ/լ)
02-03.10.17	6.5	13.9	1.32	0.25	1.17	<0.005	0.47
29-30.10.17	6.2	20.9	3.77	0.35	1.68	0.006	0.88
01-02.11.2017	6.8	22.7	1.98	0.78	1.44	0.007	1.39
07-08.11.17	6.7	41.9	4.73	1.00	3.31	0.007	0.11
09-10.11.17	5.8	5.0	0.49	0.10	0.30	<0.005	0.08
22-23.11.17	6.4	15.0	1.34	0.51	0.96	<0.005	0.66
23-24.11.17	6.8	32.1	1.76	1.63	1.39	0.010	1.43
30.11-01.12.17	6.3	24.3	2.50	1.24	2.04	0.006	0.67
06-07.12.17	5.2	32.3	6.41	1.00	2.87	0.009	1.48
07-08.12.17	5.8	19.5	2.20	1.45	1.95	<0.005	0.97
21-22.12.17	6.6	32.1	2.37	1.16	2.71	0.006	0.81
23-24.12.17	6.4	20.6	2.93	0.34	2.49	<0.005	1.37
24-25.12.17	6.2	37.1	6.85	0.75	3.61	<0.005	1.63

**ՏԱՆՁԱՂԲՅՈՒՐ ԳԵՏԻ ՋՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՈՐԱԿԸ**



**ՊԱՅՄԱՆԱՆՇԱՆՆԵՐ**


— Գետային ցանց

■ Բնակավայրեր

Մակերևութային ջրերի որակի դասեր

● 3-րդ դաս

● 5-րդ դաս




**«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր (EMEP)»**

**Օդային ավազան**

Ամբերդի ստացիոնար կայանում 2017թ. 4-րդ եռամսյակում վերցվել է օդի 217 և փոշու 75 փորձանմուշ:

Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 քիմիական տարրի պարունակությունները: Ավտոմատ եղանակով գետնամերձ օդոնի պարունակության որոշման համար կատարվել է օդի 2087 դիտարկում:

Ազոտի երկօքսիդի և ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանել ՍԹԿ-ները (ՍԹԿ<sub>միջ.</sub>=0.04մգ/մ<sup>3</sup>):



**Մթնոլորտային տեղումներ**

2017թ. 4-րդ եռամսյակի ընթացքում Ամբերդի կայանում վերցվել է 12 անձրևի, 4 ձյան և 1 ձնախառն անձրևի փորձանմուշ: Վերցված փորձանմուշում որոշվել են 35 ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները ստորև բերվում են աղյուսակի տեսքով.

Ամսաթիվ	Ցուցանիշներ						
	Ջրածնային շվեյչ	Էլեկտրահաղորդականություն (մկՍմ/սմ)	Սուլֆատ իոն (մգ/լ)	Քլորիդ իոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ֆտորիդ իոն (մգ/լ)	Սմոնիում իոն (մգ/լ)
01-02.10.17	7,0	47,7	5,58	0,72	4,67	0,009	1,09
02-03.10.17	6,6	10,6	0,62	0,10	0,87	0,005	0,17
04.10.17	6,7	9,0	0,37	0,12	0,73	0,009	0,22
10.10.17	7,4	92,3	9,94	1,30	8,80	0,011	3,58
11.10.17	6,6	21,5	2,86	0,45	1,79	0,006	0,80
12.10.17	6,8	27,4	1,87	0,53	2,66	0,008	4,46
13.10.17	6,5	17,0	1,25	0,18	1,94	0,007	1,80
28.10.17	7,4	153,4	18,34	2,51	14,28	0,024	0,23
31.10.17	6,7	23,0	2,32	0,66	2,27	<0.005	0,77
07-08.11.17	6,8	52,6	6,53	0,72	5,15	0,008	1,99
08-09.11.17	6,0	9,9	1,39	0,20	0,86	0,005	0,53
09-10.11.17	6,2	10,8	1,41	0,14	0,82	0,005	0,60
22-23.11.17	6,3	27,2	4,98	0,66	2,79	0,010	2,02
25.11.17	6,5	25,6	4,19	0,47	2,41	0,006	1,06
29-30.11.17	6,5	15,4	0,93	1,12	0,54	0,313	2,20
06-07.12.17	5,3	6,3	0,38	0,20	0,92	0,019	0,01
20-21.12.17	6,8	30,8	1,21	1,23	1,33	0,481	0,66

ՀՀ գետերի ջրի որակը (ըստ ֆիզիկաքիմիական ցուցանիշների) 2017թ. 4-րդ եռամսյակում

**Հոկտեմբեր**

ՋԿՏ	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս	
Հյուսիսային	Փամբակ	0,5 կմ գյ. Հարթագյուղից վերև (1)	-	2-րդ	2-րդ	
		0,5 կմ ք. Սպիտակից ներքև (2)	Կալցիում, ՇԱԱ, սուլֆատ իոն	3-րդ	4-րդ	
			Նիտրատ իոն	4-րդ		
		0,6 կմ ք. Վանաձորից վերև (3)	Նիտրատ իոն	3-րդ	3-րդ	
		4,5 կմ ք. Վանաձորից ներքև (4)	ԿՆ	3-րդ	5-րդ	
